ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Անահիտ Կյուրեղյան

«31» Օգոստոս 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Լոռու մարզի գ. Շենավան

Շենավանի հիմն. դպրոց, 2-րդ

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Բաբաքյոխյան Հերիք Վիլենի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022-2023» ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)** Դասարանը բաղկացած է 7 հոգուց՝ 5 տղա, 2 աղջիկ:Աշակերտներից երեքը ունեն գերազանց առաջադիմություն:Տղաներից մեկը ներառված է ԿԱՊԿՈՒ աշակերտների խմբում: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Անհատական աշխատանք է կատարվել ցածր առաջադիմություն ցուցաբերած աշակերտների հետ:Աշակերտները պատրաստակամ են, նախաձեռնող, ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:Ակտիվ մասնակցել են համադպրոցական բոլոր միջոցառումներին:

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում** Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն** Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 **Գեղագիտական դաստիարակություն** Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն** Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուներ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

3.4 **Ֆիզիկական դաստիարակություն** Դասապրոցեսին պետք է ցուցաբերոլ ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 **Աշխատանքային դաստիարակություն** Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանան գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 **Բնապահպանական դաստիարակություն** Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

4. **Դպրոց-ընտանիք կապը** Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	Գիտելիքի օր։Դասարանի կահավորում,դասարանական ակտիվի ձևավորում։	02.09.	
II	Զրույց՝ անձնական հիգիենայի մասին։	09.09	
III	Զրույց՝ Եկեղեցու և եկեղեցական տոների մասին։<<Խաչվերաց >>տոնի իմաստի մեկնաբանում։	16.09	
IV	Դաս՝ նվիրված անկախության 30-րդ տարելիցին։ Զրույց՝ <<Անկախությունը թանկ է բոլորի համար>>։	23.09	
V	Ընկերասիրության գաղափարի սերմանում։Զրույցի կազմակերպում <<Ես ունեմ լավ ընկերներ>> թեմայով։	30.09	
VI	Հայաստանի խորհրդանիշներիէ զինանշանի, դրոշի և օրհներգի մասին գիտելիքների ամրապնդում, իմաստի և նշանակության մասին զրույց։	07.10	
VII	Զրույց՝ նվիրված բերքի տոնին << Զարդարվել է մեր շուկան >> թեմայով։	14.10	

VIII	Հետաքրքրաշարժ զրույց՝ << Իմ երազների մոլորակը >> թեմայով։Անդրադարձ կատարել <<Էրեբունի- Երևանի տոնակատարությանը և իմաստին>>։	21.10	
IX	Զրուցել անձնական հիգիենայի մասին, գրքերի խնամքի մասին։	04.11	
X	Դաս- քննարկում <<Ինչու՞ և ո՞ր թռչուններն են չվում։	11.11	
XI	Ճանաչողական զրույցի կազմակերպում << Իմ գյուղի ծնունդը և պատմությունը>> թեմայով։	18.11	
XII	Աշակերտական կանոնների կազմում և ընթերցում։<<Ի՞նչ իրավունք ունի աշակերտը և ի՞նչ է պարտավոր անել>>։	25.11	
XIII	Ուսումնասիրել աշակերտների երևակայությունը ըստ<< Եթե կախարդական փայտիկ հայտնվեր իմ ձեռքին>> թեմայի։	02.12	
XIV	Դաս- քննարկում <<Ի՞նչ տվեց ինձ այս աշունը>> թեմայով։	09.12	
XV	Կազմակերպել զրույց- բանավեճ << Ես սիրու՞մ եմ աշխատել>> թեմայով։	16.12	
XVI	Զրույց՝ <<Ամանորին սպասում եմ անհամբեր>> թեմայով և պատճառաբանել։	23.12	
XVII	Զրույց անձնական հիգիենայի և դասագրքերի խնամքի մասին։ Խրատական զրույց << Հայկի, Հայաստանի, Հայոց բանակի մասին>>։	27.01	
XVIII	Հեքիաթի շաբաթ <<Հեքիաթն է կանչում>> ը թերցանությանը նպաստելու նպատակով։	03,02	
XIX	<<Բարությունն իմ ափերի մեջ է >> թեմայով զրուց։	10.02	

XX	Մայրենիի ամիս՝ << Մեր լեզուն մեր հայրենիքն է >> թեմայով զրույց՝ մայրենին գովելու, փառաբանելու և արժեքը զգալու համար։	17.02	
XXI	Զրույց՝ նվիրված Զորավար Անդրանիկին, Հայդուկներին և մեր հերոսներին;	24.02	
XXII	Խրատական զրույց << Դռները բացե՛ք, գարուն է գալիս>> թեմայով։	03.03	
XXIII	Մայրերի , կանանց միջազգային տոնին նվիրված դաս։	10.03	
XXIV	Խրատական զրույց՝ « Սասունցի Դավթի հետքերով»։	17.03	
XXV	«Ի՞նչ գիտեմ տգիեզերքի մասին» թեմայի քննարկում։	24.03	
XXVI	Ապրիլմեկյան կատակներ ծիծաղի օրվա առթիվ՝ «Եկեք մի քիչ ծիծաղենք » թեմայով։	07.04	
XXVII	Քրստոսի հարությունը խորագրի պարզաբանում։	14.04	
XXVIII	Այցելություն եկեղեցի և հիշատակի խաչքարերին։	21.04	
XXIX	« Աշխատանքը և աշխատավորությունը» թեմայով զրույց՝ աշխատավորների համերաշխության օրվա առթիվ։	28.04	
XXX	«Մայիսյան հաղթանակներ» խորագրով զրույց։	05.05	
XXXI	«Ես եմ քո օգնականը, անմե՛ղ թռչուն » թեմայով զրույց՝ նրանց խնամելու և կերակրելու նպատակով։	12.05	
XXXII	«Որքանով կարողացա սովորել վարվեցողության կանոնները» խորագրով զրույց։	19.05	
XXXIII	Ամփոփիչ զրույցի կազմակերպում « Ես որքանով կայացա որպես 2-րդ դասարանցի» թեմայով։	26.05	

Digitally signed by KYUREGHYAN ANAHIT
5101840181